

**ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ**  
*Երևանի պետական համալսարան*

**ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**  
**Ու. Ուիթմենի ԵՎ Ռ. Ֆրոսթի**  
**ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գեղարվեստական ստեղծագործության ընկալման և մեկնաբանման հարցերը միշտ եղել են բանասերների ուշադրության կենտրոնում: Կրկնությունը համամարդկային լեզվամտածողության այն ուրույն հնարներից է, որի միջոցով հեղինակին հաջողվում է վերարտադրել իր ներաշխարհը և ընթերցողին փոխանցել իր միտումը:

Այս հնարը իր ցայտուն դրսևորումն է գտնում հատկապես չափածո խոսքում, ավելին՝ այն վերջինիս անքակտելի տարրերից է: Չափածո խոսքում է, որ կրկնության բազում դրսևորումներ իրացվում են տարբեր մակարդակներում և նպաստում տեքստի գեղագիտական մթնոլորտի ձևավորմանը և խոսքն օժտում ռիթմային ելեջումներով:

Սույն հոդվածում ուսումնասիրության նյութ են դարձել ամերիկյան պոեզիայի ակնառու բանաստեղծների ստեղծագործությունները (Ու. Ուիթմեն, Ռ. Ֆրոսթ): Նրանց բանաստեղծությունները նորարարական էին թե՛ իրենց ինքնատիպ կառույցներով և թե՛ նրանցում արժարժվող գաղափարներով: Տաղաչափական ինքնատիպ կառույցներից մեկը՝ վերլիբրը, նրանց ձեռքում դարձավ «հզոր գործիք», որտեղ կրկնությունը գրեթե իր բոլոր իրացումներով հանդես է գալիս և դառնում վերջինիս անքակտելի մասնիկը: Հիրավի, նրանց պոեզիան կրկնության արվեստի բարձրակետն է: Ստորև ընթերցողի ուշադրությունը հրավիրենք Ուիթմենի, Ֆրոսթի ստեղծագործությունների վերլուծության վրա, որտեղ կրկնությունը հեղինակի խոսքում ունի առանձնակի դերակատարություն:

Կրկնության ուրույն դրսևորումներից է *վերջույթը* (Epiphora): Այն միևնույն բառի կրկնություն է՝ արտահայտված պարբերության վերջում /Bullinger, 1989/:

Այս հնարը ընդհանրապես հազվադեպ հանդիպող ոճական հնարներից է, սակայն Ուիթմենի պոեզիայում այն բազմիցս է կիրառվում:

The last sunbeam  
Lightly falls from the finish'd Sabbath,  
On the pavement here, and there beyond it is looking,  
Down a new-made double grave.

Lo, the moon ascending,  
Up from the east the silvery round moon,  
Beautiful over the house-tops, ghastly, phantom moon,  
Immense and silent moon.

I see a sad procession,  
And I hear the sound of coming full-key'd bugles,  
All the channels of the city streets they're flooding,  
As with voices and with tears...

Dirge for two veterans, Walt Whitman  
(<http://www.poemhunter.com/poem/dirge-for-two-veterans/>)

Բանաստեղծությունը աղետալի պատերազմի հետևանքների մասին է: Հերոսի ոգին փոթորկվում է՝ բազում դիեր տեսնելով: Նա խորապես սգում է զինվորների մահը: Արժաթափայլ լուսնի շողերի, թմբուկների անվերջանալի զարկերի ներքո հեղինակը խորը վիշտ է ապրում:

And every blow of the great convulsive drums,  
Strikes me through and through.

Հերոսը մխիթարանքի կարիք ունի, և այդ մխիթարանքը նա տեսնում է միայն առեղծվածային լուսնի մեջ: Նա փորձում է սփոփել և հուսադրել իրեն, որ խաղաղությունը մոտ է, և այլևս պատերազմի դառնությունը չի համտեսելու: Նրա միակ ընկերակիցն է դառնում լուսինը, և պատահական չէ, որ այս բառը պարբերաբար կրկնվում է՝ ստեղծելով իմաստային նորանոր ելևէջումներ:

Lo, the moon ascending,  
Up from the east the silvery round **moon**,

Beautiful over the house-tops, ghastly, phantom **moon**,  
Immense and silent **moon**.

Հատվածն աչքի է ընկնում **"moon"** բառային կրկնության ինքնատիպ դրսևորմամբ՝ առաջ բերելով *վերջույթ (epiphora)* երևույթը: "Moon" բառը, որն ուղեկցվում է մի շարք ածականներով՝ *silvery round moon (արծաթյա կլոր), ghastly, phantom moon (սուկայի, ցնորական), silent moon (լուռ)* ընդլայնել է առարկայի մասին նորանոր մանրամասներ, ի հայտ է բերել բազմապիսի հատկանիշներ, որի շնորհիվ տվյալ հատվածն իմաստային նորանոր նրբերանգներ է ձեռք բերել: Բանաստեղծությունը դրական մոտիվներով է ավարտվում: Հեղինակը հավատում է, որ թմբուկները այլևս աղետաբեր պատերազմի կոչ չեն անելու, դրանք լուսնի աներևակայելի շողերի ներքո միայն ծառայելու են մեղեդային երաժշտություն ստեղծելու համար: Կրկնության մեկ այլ դրսևորումը՝ *բազմաշաղկապությունը (polysyndeton)*, դառնում է խաղաղության և համերաշխության խորհրդանիշ՝ հատվածին հաղորդելով անսահման հանդարտություն:

The moon gives you light,  
**And** the bugles **and** the drums give you music,  
**And** my heart, O my soldiers, my veterans,  
My heart gives you love.

Ընթերցողի ուշադրությունը հրավիրենք ամերիկյան մյուս ականավոր գրողի՝ Ռոբերտ Ֆրոսթի ստեղծագործություններից մեկի վրա, որն աչքի է ընկնում իր ինքնատիպ բովանդակությամբ:

Whose woods these are I think I know  
His house is in the village though;  
He will not see me stopping here  
To watch his woods fill up with snow.

My little horse must think it queer  
To stop without a farmhouse near  
Between the woods and frozen lake  
The darkest evening of the year.

He gives his harness bells a shake  
To ask if there is some mistake.  
The only other sound's the sweep  
Of the easy wind and downy flake.

The woods are lovely, dark, and deep,  
But I have promises to keep,  
And miles to go before I sleep,  
And miles to go before I sleep.

Stopping by Woods on a Snowy Evening, Robert Frost  
(<http://www.poemhunter.com/poem/stopping-by-woods-on-a-snowy-evening-2/>)

Բանաստեղծությունը հնգուսնյա յամբական ստեղծագործություն է, որտեղ յուրաքանչյուր բանաստեղծական տան մեջ առկա են յուրօրինակ հանգավորումներ: Հատկապես աչքի է ընկնում վերջին բանաստեղծական տունը, որտեղ համատարած հանգավորում է *deep-keep-sleep-sleep*:

Հերոսը շրջում է ձյունապատ անտառներով և հիանում գիշերվա աներևակայելի տեսարանով: Նա կախարդված է բնությանը և երբ գալիս է տուն վերադառնալու պահը, հերոսը չի կարողանում իրեն կտրել այս գեղեցիկ տեսարանից՝ մթնշաղի մեջ գտնվող ձյունապատ անտառից: Բանաստեղծության բովանդակությունը առաջին հերթին թվում է բավականին պարզ և մատչելի ընթերցողին, սակայն խորքային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն առեղծվածային մահվան վերաբերյալ մի պատմություն է: Հեղինակի միտումը «վերձանելու» համար նախ և առաջ պետք է խորքային վերլուծության ենթարկել այն լեզվական միջոցները, որոնք առանցքային նշանակություն ունեն նրա խոսքարվեստում, ավելին՝ հանդիսանում են ստեղծագործության բովանդակության «բացահայտման» բուն միջոցները: Այդ միջոցների շարքում է կրկնության ինքնատիպ դրսևորումներից մեկը՝ *այխուակությունը (Antanaclasis)*, որի դեպքում միևնույն նախադասության կամ պարբերության մեջ բառը գործածվում է տարբեր իմաստներով /Պողոսյան, 1991/:

And miles to go before I sleep,  
And miles to go before I sleep...

Սույն հատվածում, ինչպես տեսնում ենք, կրկնվում է “*sleep*” բառը, որը երկակի իմաստ է արտահայտում: Առաջին տողում այն կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ «*ես դեռ շատ մղոններ ունեմ գնալու մինչ տուն հասնելն ու անկողին մտնելը*», իսկ երկրորդ դեպքում՝ «*ես դեռ երկար պետք է ապրեմ, մինչ մահկանացու կնքելը*»: “*Sleep*” բառը երկակի իմաստ է ձեռք բերել տվյալ հատվածում: Առաջին տողում այն արտահայտում է իր առաջին՝ բառարանային իմաստը՝ «*քնել*», իսկ երկրորդ դեպքում արդեն ձեռք է բերել «*մահանալ*» իմաստը:

19-20-րդ դարի ամերիկյան պոեզիան Ուիթմենի գլխավորությամբ, հիրավի, առանձնանում է իր ինքնատիպ կառուցվածքով և նորանոր գաղափարներով: Այս շրջանի բանաստեղծներին, հիրավի, հաջողվել է ստեղծել մի պոեզիա, որը գերծ է եվրոպական բանաստեղծություններին բնորոշ գունագեղումներից: Ուոլթ Ուիթմենը տաղաչափական յուրօրինակ կառուցվածքով՝ վերլիբրով, կարողացավ «քանդել» հնացած կառույցները և իր ինքնատիպ մտածելակերպով դարձավ բազում գրողների ոգեշնչման աղբյուր: Իսկ Ֆրոսթը և մի շարք այլ բանաստեղծներ դարձան նրա գաղափարների շարունակողները և առանձնացան իրենց մտածելակերպով և նոր ոճով: Իսկ արտահայտչական հնագույն միջոցների, հատկապես կրկնության շնորհիվ, նրանց հաջողվեց գերել բազում ընթերցողների սիրտը, փոթորկել նրանց աշխարհը և գրականության մեջ առանձնանալ որպես ինքնատիպ գրողներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Akhmanova O. Linguostylistics: Theory and Method. Москва, MGU, 1972.
2. Bullinger E. Figures of Speech used in the Bible. London, 1898.
3. Creely R. Introduction to Whitman, poems selected by Robert Creely. Baltimore: Penguin Books, 1973.
4. Hartman C. Free Verse: An Essay on Prosody. Princeton: Princeton University Press, 1980.
5. Jakobson R. Linguistics and Poetics. // Style and Language. USA. MIT, 1963.
6. Հարությունյան Ա. Ընտրանի անգլիական և ամերիկյան պոեզիայի, Երևան, Ապոլոն, 2000:

7. Պողոսյան Պ.Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.1, Երևան, 1991:
8. [www.hunterpoems.com/robert-frost/poems/](http://www.hunterpoems.com/robert-frost/poems/)
9. [www.hunterpoems.com/walt-whitman/poems/](http://www.hunterpoems.com/walt-whitman/poems/)

**А. МЕЛКОНЯН – *Лингвопоэтический анализ повтора в произведениях У.Уитмена и Р.Фроста в американской поэзии.*** – Данная статья изучает роль повтора в произведениях американских поэтов, таких как Уолт Уитмен и Роберт Фрост. Повтор может проявиться в поэзии и стать неразделимой частью литературного восприятия человечества. Повтор играет важнейшую стратегическую роль как для читателя, так и для самого автора, так как он выделяется своей образностью и приобретает ценность в поэзии.

**A. MELKONYAN – *On the Linguopoetic Study of Repetition in American Poetry.*** – The paper explores the linguopoetic peculiarities of repetition in American poetry, based on W. Whitman's and R. Frost's poems. It is one of the most powerful means which reveals the author's understanding of the surrounding world, his thoughts and ideas. The use of repetition helps the reader to perceive such secret aspects of the poem that are hidden between the lines.